**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 1

## ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ԹԵՏՐՎԱՐԻ 6-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի6-րդ կետի պահանջներով ավագանին

որոշում է

հաստատել Դեղձուտ համայնքի ավագանու 06.02.2017թվականի թիվ 2 հերթական նիստի օրակարգը

1. ,, Դեղձուտ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 29-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու և համայնքի 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին,,- հարցը: / Զեկ. Կատյա Գիշյան/

2. ,, Դեղձուտ համայնքիավագանու 2011թվականի մայիսի 4-ի թիվ 2 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմի հաստատման մասին ,,-հարցը: /Զեկ. Կատյա Գիշյան/

3 .,,Դեղձուտ համայնքի 2017-2021թվականների զարգացման ծրագրի հաստատման մասին,, - հարցը: / Զեկ. Յուրիկ. Մուրադյան/

4. ,,Դեղձուտ համայնքի 2016թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին: /Զեկ. Ա. Հովհաննիսյան/

5. ,, Համայնքի ղեկավարի եռամսյա հաղորդումը բյուջեի 2016թվականի 4-րդ եռամսյակի կատարողականի մասին,,- հարցը: /Զեկ, Անժելինա Հովհաննիսյան/

6. ,,Դեղձուտ համայնքի 2017թվականի բյուջեի հաստատման մասին,,- հարցը: /Զեկ. Անժելինա Հովհաննիսյան/

7. ,,Համայնքի ավագանու 12.12.2016թվականի ,,Դեղձուտ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին,, թիվ 30-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին./Զեկ. Կատյա Գիշյան/

8.Համայնքի ավագանու 22.12.2016թվականի ,,Հողամասը օտարելու մասին,, թիվ 34 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:/ Զեկ. Յուրիկ Մուրադյան/

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 2-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 29-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,,Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի և ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով ավագանին

որոշում է`

1. Ուժը կորցրած ճանաչել հանայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 12-ի ,,Համայնքի 2017թվականի Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանում,, N 29-Ն որոշումը,

2. Համայնքի 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել` համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված
Դեղձուտ համայնքի ավագանու
„ 06 „ 02 „2017թվականի
N„2-Ն„ որոշման
համայնքի ղեկավար
Յուրիկ Մուրադյան

## ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

### Տեղական տուրքերի դրույքաչափերը

1. Դեղձուտ համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝տասհինգ հազար դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝հինգ հազար դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝

շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաքարիսային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար` հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար` օրացուցային տարվա համար` երկու հարյուր հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոտեխսպասարկման տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար` օրացուցային տարվա համար` վաթսուն հազար դրամ.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար` օրացուցային տարվա համար` հիսուն հազար դրամ.

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար`

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար` յուրաքանչյուր եռամսյակի համար`

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` վեց հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` տասներկու հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տասյոթ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում քսաներկ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` երեսուն հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` հիսուն հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` յուրաքանչյուր եռամսյակի համար`

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` վեց հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` տասներկու հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` տասյոթ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` քսաներկ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղասրահներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ սաս հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

դ. խաղասրահների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինություններում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասվեց հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսաներկու հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսունհինգ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինություններում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ.

14) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդատուն տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով.

15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տաս հազար դրամ.

17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տաս միլիոն դրամ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Դեղձուտի գյուղական համայնքում ավագանու որոշմամբ հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-18-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Դեղձուտի գյուղական համայնքում ավագանու որոշմամբ հաշվարկել 0.3, գործակցի կիրառմամբ:

## Տեղական վճարների դրույքաչափերը

1. Դեղձուտ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` 1000դրամ,

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար`500դրամ,

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար համայնքի ավագանին չի սահմանում,

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

ա/ըստ ծավալի մեկ մեշ խորանարդ աղբի համար ` 200դրամ,

բ/ ըստ զանգվածի` մեկ տոննա աղբի համար` 1000դրամ

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար` մեկ փաստաթղթի համար` փոխհատուցման վճար` երկու հարյուր դրամ:

Աշխատակազմի քարտուղար /Կ. Գիշյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 3

ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 2 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի փետրվարի 24-ի թիվ 164 որոշումը ավագանին

որոշում է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Դեղձուտ համայնքի ավագանու 2011թվականի մայիսի 4-ի ,, Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին,, N 2 որոշումը ,
2. Հաստատել համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված
Դեղձուտ համայնքի ավագանու „ 06 „ 02 „2017թ-ի
N 3 որոշումից Դեղձուտ համայնքի
ղեկավար՝ Յուրիկ Մուրադյան

# ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Յուրիկ Մելքոնյան – համայնքի անդամ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Ջեմմա Մելքոնյան – բուժքույր,

Հանձնաժողովի անդամներ՝

Արուսյակ Թովմասյան – համայնքի անդամ,

Նորայր Բեգլարյան - համայնքի անդամ,

Կարինե Մովսիսյան – ավագանու անդամ:

Աշխատակազմի քարտուղար /Կ. Գիշյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 4-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին

որոշում է՝

հաստատել Դեղձուտ համայնքի 2017-2021թթվականների զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 5-Ն

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ; 6-րդ կետերի , ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ , 5-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով ,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ«« 15.12.2016թվականի Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները ավագանին

որոշում է

Դեղձուտ համայնքի 2016թվականի տարեկան բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը

1.Դեղձուտ համայնքում հասարակական նշանակության 0.05163հա հողատեսքի, վրան կառուցված 78.23քմ մակերեսով շինության և 21.93քմ մակերեսով ծածկի 31.01.2017-ին օտարումից առաջացած 1015000 /մեկ միլիոն տասնհինգ հազար/ դրամը որպես եկամուտ մուտքագրել համայնքի ֆոնդային բյուջե:
2. Համայնքի 2016թվականի տարեկան բյուջեի

Մշակույթի տան տնօրեն տողում ,,73000դրամ,, բառերը փոխարինել ,,75000դրամ,,բառերով ,

Հավաքարար տողում ,,73000դրամ,, բառերը փոխարինել ,,75000դրամ,,բառերով,

գրադարանավար տողում ,,73000դրամ,, բառերը փոխարինել ,,75000դրամ,, բառերով:
3. 4213- կոմունալ ծառայություն հոդվածի

Աշխատավարձ- ,,73000դրամ,, բառերը փոխարինել ,,75000դրամ,,բառերով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 6

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՌԱՄՍՅԱ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ 2016ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջները ավագանին

որոշում է`

համայնքի ղեկավարի եռամսյա հաղորդումը համայնքի բյուջեի 2016թվականի 4-րդ եռամսյակի կատարողականի մասին /համաձայն հավելվածի/ գնահատել բացասական:

Կողմ -3

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՇԱԿ
3. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

Դեմ -2

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ
2. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

հավելված
Դեղձուտ համայնքի ավագանու
„ 06 „ 02 „2017թ-ի N ճրոշումից
Դեղձուտ համայնքի ղեկավար
Յ. Մուրադյան

2016թ., 4-րդ եռամսյակ

Ծախսային մաս

| | ծրագիր | պլան | փաստացի | % |
|---|---|---|---|---|
| 1 | Արտադպրոցական դաստիարակություն | 200.0 | 100.0 հազ.դրամ | 50 |
| 2 | Արտաքին լուսավորության ցանց | 2000.0հազ.դրամ | - | |
| 3 | Գույքի նկատմամբ իր վրանցում | 1070.0հազ.դրամ | - | |
| 4 | Գրադարան | 946.0 հազ.դրամ | 222.9 հազ.դրամ | 23.5 |
| 5 | Թատերական ներկայացումներ | 150.0 հազ.դրամ | - | |
| 6 | Կառավարման մարմնի պահպանում | 12070.0 հազ.դրամ | 3513.7 հազ.դրամ | 29.1 |
| 7 | Հանրակրթական ուսուցում | 100.0 հազ.դրամ | - | |
| 8 | Հասարակական կազմ. աջակցություն | 200.0 հազ.դրամ | - | |
| 9 | Մայրուղիների և փող.վերակառ. և հիմն. | 1680.0 հազ.դրամ | 70.0 հազ.դրամ | 0.04 |
| 10 | Մշակ միջոցառումների իրական. | 2392.0 հազ.դրամ | 806.7 հազ.դրամ | 33.7 |
| 11 | Սան մաքրում | 876.0 հազ.դրամ | 292.0 հազ.դրամ | 0.33 |
| 12 | Սոցիալապես անձանց աջակց | 2900.0 հազ.դրամ | 1410.0 հազ.դրամ | 48.6 |
| 13 | Ֆոնդային բյուջեի պ/մ | 547691.5դրամ | - | |
| 14 | Վարչական բյուջեի պ/մ | 313.8 հազ.դրամ | - | |
| | ընդամենը | 25445491.5դրամ | 6415.3 հազ.դրամ | 25.2 |

Եկամուտներ

| | | պլան | փաստացի | % |
|---|---|---|---|---|
| Գույքահարկ կազմակերպություններից շենք շինություններից | 900415168021 | 9.0 հազ.դրամ | - | |
| Գույքահարկ անհատ ձեռնարկատերերից փոխադրամիջոցներից | 900415168039 | 1400.0 հազ.դրամ | 787.8 հազ.դրամ | 56.3 |
| Գույքահարկ քաղաքացիներից շենք-շինություններից | 900415168146 | 220.0 հազ.դրամ | - | |
| Հողի հարկ գյուղ. նշ հողից | 900415168047 | 3998.1 հազ.դրամ | 3238.0 հազ.դրամ | 80.9 |
| Հողի հարկ ոչ գյուղ. նշ հողից | 900415168054 | 9.0 հազ.դրամ | - | |
| Ոգելից խմիչքի իրացում | 900415168013 | 40.0 հազ.դրամ | - | |
| Ծխախոտի իրացում | 900415168153 | 40.0 հազ.դրամ | - | |
| Աղբաքին գումար | 900415002667 | 24.0 հազ.դրամ | - | |
| դոտացիա | 900415168120 | 14217.7 հազ.դրամ | 3554.4 հազ.դրամ | 24.9 |
| ընդամենը | | 19957.8 հազ.դրամ | 7580.2 հազ.դրամ | 37.9 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 7-Ն

## ՀԱՍՏԱՏԵԼ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԱԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ավագանին

որոշում է՝

հաստատել Արարատի մարզի Դեղձուտ համայնքի 2017թվականի տարեկան բյուջեն համաձայն հավելվածի:

| Կողմ -2 | Դեմ -3 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| 1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ | 1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ | |
| 2. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ | 2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՇԱԿ | |
| | 3. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ | |

N 7-Ն որոշումը չի ընդունվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված
Դեղձուտ համայնքի ավագանու
,, 06,, 02,,2017թ-ի N 7-Ն որոշումից
Դեղձուտ համայնքի ղեկավար
Յուրիկ Մուրադյան

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

Ընդամենը եկամուտներ -19957.8հազ.դրամ

1.Ընդամենը գույքահարկ - 1629.0 հազ.դրամ

ա) գույքահարկ շենք-շինությունից - 220.0 հազ.դրամ

բ) գույքահարկ փոխադրամիջոցից - 1400.0 հազ.դրամ

գ ) գույքահարկ Վ/տարածքում գտնվող շինություններից - 9.0 հազ.դրամ

2. Ընդամենը հողի հարկ - 4007.1 հազ.դրամ

ա) գյուղ. նշանակության հող - 3998.0 հազ.դրամ

բ ) ոչ գյուղ.նշանակության հող - 9.0 հազ.դրամ

3. Տեղական տուրք - 80.0 հազ.դրամ

ա)խմիչքի իրացումից - 40.0 հազ.դրամ

բ) ծխախոտի իրացումից - 40.0 հազ.դրամ

4.Տեղական վճար

արտաքին գովազդ -24.0 հազ.դրամ

5. Դոտացիա - 14217.7 հազ.դրամ

Ընդամենը ծախս -19957.8 հազ.դրամ

01.01.01.51-Կառավարման մարմնի պահպանում

4111- աշխատավարձ - 9500.0 հազ.դրամ

1. գյուղապետ -175.0հազ.դրամ
2. տեղակալ - 120.0հազ.դրամ
3. աշխտակազմի քարտուղար - 125.0 հազ.դրամ
4. աշխատակազմի գլխավոր մասնագետ - 124.0 հազ.դրամ
5. աշխատակազմի առաջատար մասնագետ - 122.0 հազ.դրամ
6. օպերտոր - 118.0հազ.դրամ

4212-Էներգետիկ ծառայություններ -300.0 հազ.դրամ
ա) էլ. էներգիա -200.0 հազ.դրամ
բ) գազ -100.0 հազ.դրամ
4213- կոմունալ ծառ. - 60.0հազ.դրամ
4214- կապի ծառ. -200.0հազ.դրամ
4215- ապահովագրական ծառ. - 50.0հազ.դրամ
4231-վարչական ծառայություն -120.0հազ.դրամ
4232-համակարգչային ծառայություններ -100.0հազ.դրամ
4233-աշխատակազմի մասն.զարգ. ծառ-60.0
4234- տեղեկատվական ծառ. -150.0հազ.դրամ
4241- մասնագիտական ծառայություն (տեխ սպասարկ) - 80.0հազ.դրամ
4252-մեքենաների և սարք. ընթ.նորոգ. և սպասարկում - 50.0հազ.դրամ
4261- գրասենյակային նյութեր -250.0հազ.դրամ
ա) նախահաշիվ, հաշվ. գրքեր և ձևեր - 100.0հազ.դրամ
բ) գրասենյակային նյութեր և պիտույքներ - 80.0հազ.դրամ
գ) հ/հ-ի գիրք,ռիտուշ,թանաք,հաշվառման գրքեր,թուղթ - 70.0հազ.դրամ
4264- տրանսպորտային նյութեր - 500.0հազ.դրամ
ա) բենզին -500.0հազ.դրամ
4269-Հատուկ նպ այլ -150.0հազ.դրամ

08.02.04.51 Այլ մշակույթային կազմակերպություններ
4111-աշխատավարձ -1892.0հազ.դրամ
1.Մշակույթի տան տնօրեն -75.0հազ.դրամ
2.Հավաքարար -75.0հազ.դրամ
4239-Ընդհանուր բնույթի այլ/ամանորյա միջ./ -100.0հազ.դրամ
4269 -Հատուկ նպ. այլ /ամանորյա նվ./ -300.0 հազ.դրամ
4261-ա/Գրենական պիտ.
բ/լամպ,վարդակ,դրոշակ,էլ.լար/ -100.0հազ.դրամ

08.02.01.51 Գրադարանային ծառայություններ
4111-աշխատավարձ -946.0հազ.դրամ
1.Գրադարանավար -75.0հազ.դրամ
05.01.01.51 Սան-մաքրում

4213- կոմունալ ծառայություն -900.0հազ.դրամ
Աշխատավարձ-75,0հազ.դրամ
08.02.05.52 Թատերական ներկայացումներ
4239- ընդ. բնույթի այլ ծառայություն -150.0հազ.դրամ
09.01.02.51 Հանրակրթական ուսուցում
4637- Ընթ. դրամաշնորհներ -100.0հազ.դրամ
09.05.01.51 Արտադպրոցական դաստիարակություն
4637-Ընթ դրամաշնորհներ -200.0հազ.դրամ
10.03.01.51 Այլ նպաստներ բյուջեից
4726-Հուղարկավորության նպ. բյուջեից -400.0հազ.դրամ
4729-Սոց. անապ. անձ աջակցություն -1600.0հազ.դրամ
10.07.01.55Հասարակական կազմ. աջակցություն
4819-Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմ. -200.0հազ.դրամ
ա) ,,Արարատ-2001,,հիմնադրամին
բ) ,,Ձյու-Դոյի,, ֆեդերացիա
գ) ,,Երկրապահ կամ. միություն,,
01 06 01 55 Գույքի նկատմամբ իր. գրանցում և տեղ. տրամադրում
4819- Նվիրատվ. այլ շահույթ չհետապնդող կազմ. -70.0հազ.դրամ
11.01.02.51Պահուստային ֆոնդ
4891- Վ/բ պահուստային ֆոնդ -1429.8հազ.դրամ
Ֆոնդային բյուջե
Ընդամենը եկամուտներ-6615903.5դրամ
Ընդամենը ծախս-6615903.5դրամ
01.06 01.55 Գույքի նկատմամբ իր. գրանցում և տեղ. տրամադրում
5133-Գեոդեզիական քարտեզագրում -1000.0հազ.դրամ
06.04.01.51Արտաքին լուս-ն ցանցի հիմն-ում
5112-շենք-շինությունների կառուցում-2000.0հազ.դրամ
04.05.01.58Մայրուղիների և փող-ի վեր. և հիմն-ում
5113-շենք-շինությունների կապ.նորոգ-980.0հազ.դրամ
5134-նախագծահետազոտ. Ծախսեր-100.0հազ.դրամ
01.01.01.51.Կառավարման մարմնի պահպանում
5122-վարչական սարքավորումներ-300.0հազ.դրամ
11.01.02.52Ֆոնդային բյուջեի պահուստային միջոցներ
4891-պահուստային միջոցներ-2235903.5դրամ

Աշխատակազմի քարտուղար /Կ. Գիշյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 8-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.12.2016ԹՎԱԿԱՆԻ N 30-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով ,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ՝ 15.12.2016թվականի Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները ավագանին

որոշում է՝

Դեղձուտ համայնքի ավագանու 12.12.2016թվականի <<2017թվականի Դեղձուտ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 30-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- Մշակույթի տան տնօրեն տողում ,,73000դրամ,, բառերը փոխարինել ,,75000դրամ,,բառերով,

- Հավաքարար տողում ,,73000դրամ,, բառերը փոխարինել ,,75000դրամ,,բառերով,

-գրադարանավար տողում ,,73000դրամ,, բառերը փոխարինել ,,75000դրամ,,բառերով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 9

## ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.12.2016ԹՎԱԿԱՆԻ N 34 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի և 5-րդ կետի պահանջները ավագանին

որոշում է՝

Դեղձուտ համայնքի ավագանու 22.12.2016թվականի ,,Հողամասը օտարելու մասին,, N 34 որոշման մեջ վերջին նախադասությունը ընթերցել հետևյալ շարադրմամբ.

1. Օտարվող 03-037-0015-0022ծածկագրով 0.05163հա հասարակական նշանակության հողատեսքի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 272.606 /երկու հարյուր յոթանասուներկու հազար վեց հարյուր վեց/ դրամ,

2. 03-037-0015-0022-001ծածկագրով 78.22քմ մակերեսով դպրոցի հին շենքի և 03-037-0015-0022-002 ծածկագրով 21.93քմ մակերեսով ծածկի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 727.394/ յոթ հարյուր քսանյոթ հազար երեք հարյուր իննսունչորս/ դրամ:

Ընդամենը 1000000/ մեկ միլիոն/ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՇԱԿ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ